

Ա/թ նոյեմբերի 2-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Տեղ համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 29 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր քսան, աշխատանքի տեղավորման չորս, բնակարանի գազաֆիկացման երկու, վարձակալական հիմունքներով հող հատկացնելու, սերմացու ցորեն տրամադրելու, անասունների փոխհատուցման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասներեքին տրվել է դրական լուծում, յոթը՝ մերժվել է:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է բնակարանի գազաֆիկացման, վարձակալական հիմունքներով հող հատկացնելու, սերմացու ցորեն տրամադրելու, անասունների փոխհատուցման վերաբերյալ դիմումները: